Т.Г. АРУТЮНЯН

УЧАСТИЕ ЧЕЧЕНЦЕВ В АРМЯНО-АЗЕРБАЙДЖАНСКОМ КОНФЛИКТЕ

В конце XX века Карабахский конфликт достиг своего апогея и сопровождался активизированными в СССР бурными национальными движениями и сотрясениями. Представлена роль Турции в данном конфликте, доказывается факт объединения кавказских мусульманских народов против местного крестьянского населения. Эта опасность присутствует до сих пор и может иметь серьезные последствия для региона.

Ключевые слова: Северный Кавказ, чеченские боевики, Турция, Нагорно-Карабахский конфликт.

T.G. HARUTYUNYAN

THE CHECHEN PARTICIPATION IN THE KARABAKH CONFLICT

At the end of the 20th century, the Karabakh conflict reached its peak and was accompanied by a storm of national movements and tremors intensified in the USSR. Turkey's role in the conflict is introduced. The fact of combining of Muslim peoples against the local peasant population is proved. This threat exists until now and may have serious consequences for the region.

Keywords: North Caucasus, Chechen rebels, Turkey, NK conflict.

ՀՏԴ 1(479.25)

Ա.Վ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Դիտարկվում է Դավիթ Անհաղթի գործնական փիլիսոփայությունը, որի հիմքում ընկած է մարդու բարոյական կատարելագործումը, որը անհարժեշտ է պետականաշինության և քաղաքացիական հասարակության զարգացման համար:

Առանցքային բառեր. գործնական փիլիսոփայություն, մշակութային արժեք, առաքինի, հոգու խնամք, բարոյական կատարելագործում:

Փիլիսոփայության գիտելիքի մեջ իմացականն ու արժեքայինը համադրված են: Այն ձգտում է դեպի գեղեցիկն ու վեհը, առաքինին ու բարին: Եվ այդ ճանապարհին շատ անհրաժեշտ է ճշմարտության իդեալը: Այդ փաստով կարելի է բացատրել, որ փիլիսոփայական գիտելիքը ոչ միայն իմացաբանական գիտելիքն է, այլև արժեքայինը: Գոյի որ բնագավառին էլ որ անդրադառնում ենք, փորձում ենք այնտեղ մարդկային գործունեության իմաստը տեսնել, բացահայտել փիլի-

սոփայության նշանակությունը մարդու համար: Հենց այս կոնցեպցիաներով է զբաղվում գործնական փիլիսոփայությունը, քանի որ այն նաև ինտեգրալ, համադրական համալիր մշակույթ է: Աշխատանքի նպատակն է վերոհիշյալ հարցերին անդրադառնալ Դավիթ Անհաղթի փիլիսոփայական սկզբունքների միջոցով, քանի որ հարյուրամյակներ անց էլ վերարժևորվում են Անհաղթի ստեղծագործությունները, քանի որ նա ուսումնասիրեց և հասավ իր ժամանակաշրջանի փիլիսոփայական գիտելիքների և ընդհանրապես գիտությունների բարձրագույն մակարդակին, այդ ամենը ծառայեցնելով հարազատ ժողովրդի շահերին:

«Ովքեր գեթ մեկ անգամ փիլիսոփայական խոսք են տենչում և պատեհ առիթ են ունենում լոկ մատի ծայրով ճաշակել նրա քաղցրությունը, նրանք բոլոր երկրավոր հոգսերին «մնաս բարյավ» ասելով, ողջախոհ մի մոլորությամբ անձնատուր են լինում նրան» [1]:

Նրա ըմբռնմամբ՝ փիլիսոփայությունը գործ ունի ոչ միայն ճշմարտության, առաքինության, բարոյականի և գեղեցիկի իդեալների հետ, այլ նաև այն բանի հետ, ինչը միավորում է այդ իդեալները: Դավթի համար փիլիսոփայությունը սոսկ հոգեկան բավարարվածության միջոց չէր, քանի որ այն ունի ոչ միայն տեսական, այլև գործնական նշանակություն:

«… Տեսականը և գործնականը փիլիսոփայության մասերն են, և երբ պակասում էր մի մասը, անկատար է մնում մյուսը. նույնպես և գործնական մասի բացակայության դեպքում անկատար է լինում փիլիսոփայությունը: Իսկ կատարյալ փիլիսոփան իրեն պետք է զարդարի ոչ միայն տեսությամբ, այլև գործնական փիլիսոփայությամբ» [2]:

Գործնական փիլիսոփայության առարկայատիրույթը, Դավթի կարծիքով, հասարակագիտությունն է և ամենից առաջ՝ բարոյագիտությունը, քաղաքականությունը և տնտեսագիտությունը, որն էլ հիմք է հանդիսանում, որ հայ մեծ իմաստասեր փիլիսոփան միաժամանակ համարվի և՛ բարոյագետ, և՛ տնտեսագետ, և՛ քաղաքագետ:

Բնականաբար, հարց է ծագում. ի՞նչն է ստիպել Դավթին՝ զբաղվելու գործնական փիլիսոփայությամբ, ո՞րն էր դրա պատմական անհրաժեշտությունը: Պատասխանն ինքնին պարզ է՝ օրինավոր քաղաքացիներ դաստիարակելու պահանջը:

Մարդու բարոյական կատարելագործումը փիլիսոփան սերտորեն կապում է հայրենիք հասկացության հետ: Հին հելլենների նման՝ նա սիրում էր ասել, թե հայրենիքից է սկիզբ առնում մարդու լինելությունը, հայրենիքն է ուսուցանում պիտանի վարքագիծ և բարի ապրելակերպ:

Հարազատ մնալով իր սկզբունքներին՝ Անհաղթը փիլիսոփայությունը համարում է այն գիտությունը, որը պետք է դաստիարակի և զորացնի մարդու հոգին:

«Փիլիսոփայությունը զբաղվում է հոգով, որովհետև փիլիսոփայությունը արթնացնում և լուսավորում է հոգին, մաքրելով նրա՝ մարմնական ցանկություններով պատած և մթագնած աչքերը: Եվ ահա, ինչքան հոգին նախապատվելի է մարմինից, նույնքան փիլիսոփայությունը, որ գեղեցկացնում է հոգին, նախապատվելի է մյուս արվեստներից, որոնք գեղեցկացնում են մարմինը» [3]: Ընդ որում, եթե փիլիսոփան սկսում է սեփական հոգու խնամքից, կատարյալ փիլիսոփան արդեն ի վիճակի է հոգ տանել նաև ուրիշների անկատար հոգիների մասին՝ հանդես գալով որպես խորհրդատու, խնամակալ և ուսուցիչ: Նրանք խնամում են մարդկանց հոգիները և տանում նրանց տգիտությունից դեպի ճշմարիտ գիտություն:

Անհաղթը ոչինչ չի անում տարերայնորեն, նա գործնական փիլիսոփայությունը ընկալում է որպես հոգու խնամք: Վերջինս մեզ սովորեցնում է ոչինչ չանել «ըստ բարկության»…[4]:

Անհաղթը «հոգու խնամքը» հասկանում է որպես առաքինության արմատավորում: Այդ ճանապարհին գիտելիքը, չնայած իր ողջ կարևորությանն ու անհրաժեշտությանը, օժանդակ դեր է խաղում: Այն օգնում է մարդուն՝ հասկանալու հոգեկան կատարելությունը, առաքինությունը, հնարավորություն է տալիս տարբերելու ճշմարիտը ստից, չարը բարուց, խուսափել չարից:

«…փիլիսոփայությունը գոյություն ունի այն բանի համար, որ ազնվացնի և գեղեցկացնի մարդկային հոգին և փոխադրի այն նյութական և մառախլապատ կյանքից դեպի աստվածայինը և աննյութականը» [5]:

Եթե տեսական փիլիսոփայության գերագույն սկզբունքը դատողականությունն է, ապա գործնական փիլիսոփայությանը՝ արդարությունն է, որը մարդուն և մարդկային հասարակությանը տանում է դեպի առաքինություն: Այդ նպատակին են ծառայում գործնական փիլիսոփայության վերը նշված երեք բաղկացուցիչ մասերը: Առաքինությունը՝ հոգևոր կատարելությունը, գիտելիքից բարձր է, որովհետև ըստ Դավթի՝ առաքինությունը փիլիսոփայության վերջնական ու գերագույն նպատակն է:

Անհաղթը նշում է, որ բարոյագիտությունը դրսևորվում է տնտեսագիտության, վերջինս էլ՝ քաղաքագիտության մեջ: Նա այդ երեք կողմերի մեջ տեսնում է փոխկապակցություն: «…ով որ ի վիճակի է պետություն ղեկավարել, նա կարող է կարգավորել և տան գործերը, և բարքերը: Ուստի քաղաքագիտությունը համազոր է գործնական փիլիսոփայության, իսկ տնտեսագիտությունը՝ քաղաքագիտության» [6]:

Փիլիսոփայի քաղաքագետ լինելը շատ կարևոր է. դա արտահայտվում է հետևյալ բանաձևում. «Փիլիսոփայությունը քաղաքագիտություն է, որովհետև քաղաքական փիլիսոփան ձգտում է և՛ գիտությամբ, և՛ գործերով ըստ մարդկային կարողության նմանվել աստծուն» [7]:

Ըստ Դավթի՝ մարդու մերձեցումը կամ նմանեցումը Արարչին իրականացվում է փիլիսոփայի, ընդ որում, կատարյալ փիլիսոփայի միջոցով: Հենց այդ նմանության հիմքն է հանդիսանում գործնական փիլիսոփայությունը, որի միջոցով կատարյալ փիլիսոփան փորձում է նմանվել Աստծուն:

Ներկայացնելով գործնական փիլիսոփայության պլատոնյան և արիստոտելյան մեկնաբանությունները՝ Անհաղթը վեր է հանում նաև սեփական մոտեցումը: Նա գտնում է, որ փիլիսոփան և՛ օրենսդիր է, և՛ դատավոր: Իրենց բնությամբ առաքինի ու մեծ մարդիկ կանոնների կարիք չունեն, այլ գործում են այդ կանոններից վեր, և իրենք հետնորդների համար կանոն են հանդիսանում:

Մեծ մտածողը գտնում էր, որ օրենսդիր փիլիսոփայի սահմանած օրենքներով պարտավոր է ապրել յուրաքանչյուր քաղաքացի:

Դավիթ Անհաղթը գտնում է, որ մարդու համար շատ կարևոր է գործնական փիլիսոփայությունը, քանի որ մարդը պարզապես գործունեության դատապարտված էակ է: Գործնականի կարևորագույն քայլը Անհաղթը համարում է սահմանների մեջ մնալը, երբ մարդը կարողանում է իր մեջ մշակել չափի, կարգ ու կանոնի զգացումը: Ըստ Դավթի՝ կատարյալ փիլիսոփան չի ձգտում անչափին, քանի որ չբավարարված տենչանքները ծնում են մեծ թախիծ:

Հայ մտածողը «Ոչինչ չափից ավելի» կոչը ընդունում է որպես հիմնական կողմնորոշիչ՝ նշելով, որ չափը չպահելու դեպքում դրականը կարող է փոխել իր նշանը և դառնալ բացասական: Սակայն առաքինության խնդրում այդ բնական պահանջը կորցնում է իր ուժը, քանի որ միայն առաքինի դառնալու ընթացքն է, որ անվերջ է և երբեք հագեցման չի հասնում:

Որոշելով փիլիսոփայության նպատակը՝ Դավիթը դրան տալիս է նաև բարոյական ուղղվածություն: Այդ բանին նա բազմիցս անդրադարձել է տարբեր առիթներով և ամեն անգամ բերում է Պլատոնի օրինակը. «Ես փիլիսոփա եմ անվանում ոչ այն մարդուն, որ շատ բան գիտե, և ոչ նրան, ով շատ բաների մասին կարող է խոսել, այլ նրան, ով անբիծ ու անարատ կյանք է վարում, որովհետև կատարյալ փիլիսոփան նա չէ, ով մեծ գիտելիքներ ունի, այլ նա՝ ով կարող է հնազանդեցնել կրքերը» [8]:

Ըստ Անհաղթի՝ մարդ-փիլիսոփան օժտված է աստվածային բոլոր բարեմասնություններով: Լինելով իմաստուն, ունենալով գիտելիք և ուժ՝ փիլիսոփան կարող է օգնել մարդկանց, որպեսզի նրանք հաղթահարեն իրենց արատները և

բարձրանան առաքինության աստիճանի: Մեծ իմաստասերի գործնական փիլիսոփայության շնորհիվ բարոյագիտության մասին մի ամբողջ ուսմունք մշակվեց, առաջադրելով հասարակական կարևոր նշանակություն ունեցող բազմաթիվ հարցեր, որոնք հետագայում բացառիկ դեր խաղացին հայ փիլիսոփայության զարգացման համար: Այլ կերպ ասած, գործնական փիլիսոփայության ոլորտը հասարակական կյանքն է: Դրանով է մարդը, ըստ Անհաղթի, տարբերված անբան արարածներից, որովհետև ի տարբերություն կենդանիների՝ նա կառավարվում է ոչ թե բնազդներով ու կրքերով, այլ բանականությամբ: «Անկեղծ ու անաղարտ» կենցաղավարությունը, ըստ Դավթի, ինչ-որ աստվածային բան չէ, այլ կրթության և դաստիարակության արդյունք [8]:

Բարոյականության համար մղվող պայքարի ամենակարևոր խնդիրն այն է, որ մարդիկ սովորեն չանել այն, ինչ անհամատեղելի է ճշմարիտ առաքինության հետ: Իսկ դրան հասնելու լավագույն միջոցը փիլիսոփայությանը, մասնավորապես՝ գործնական փիլիսոփայությանը տիրապետելն է:

Ամփոփելով կարելի է ասել, որ գործնական փիլիսոփայությունը հիմնականում մարդաբանական և մշակութաբանական բնույթ ունի: Քանի որ գործնական փիլիսոփայությունն իրականում որ բնագավառին էլ անդրադառնա (բարոյագիտություն, իրավագիտություն, քաղաքականություն և այլն), աշխատում է այնտեղ մարդկային գործոնի իմաստ տեսնել, բացահայտել նրա նշանակությունը մարդու համար, տեսնել մշակութային արժեք: Այսինքն՝ դա մշակույթ է, ավելի ստույգ՝ «քաղաքացիական մշակույթ»:

Այսօր մոդայիկ է դարձել քաղաքացիական հասարակութան մասին խոսելը: Դրա հիմքում դրված է գործնական փիլիսոփայությունը, որի նպատակն է մարդուն հոգեկան կատարելության և իսկական առաքինության հասցնելը: Այսպիսով, կարելի է ասել մեր նպատակն է, որ հայ մարդը լինի կրթված: Դա կնպաստի քաղաքացիական հասարակության ձևավորմանը, քանի որ քաղաքացիական հասարակության համակարգում առաջին պլան է մղվում քաղաքացիների միջև հասարակական կարգավիճակների ամրագրումն ու քաղաքակիրթ հարաբերությունների հաստատումը, որով էլ պայմանավորված են սոցիալական համակեցության օրենքները: Այսինքն՝ նախ պետք է ձևավորվենք, կայանանք որպես դիմագիծ ունեցող սուբյեկտ և այնուհետ միայն նպաստենք ցանկալի և մեզ որոշակիորեն հարազատ արտաքին իրականության կերտմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Դավիթ Անհաղթ**, Երկեր. - Երևան, «Սովետականգրող» հրատարակչություն, 1980.- էջ 35:
2. Տես նույն տեղում, էջ 117:
3. Տես նույն տեղում, էջ 124:
4. Տես նույն տեղում, էջ 118:
5. Տես նույն տեղում, էջ 125:
6. Տես նույն տեղում, էջ 122:
7. Տես նույն տեղում, էջ 124:
8. Տես նույն տեղում, էջ 120:

А.В. БАГДАСАРЯН

ПРАКТИЧЕСКАЯ ФИЛОСОФИЯ ДАВИДА НЕПОБЕДИМОГО

Человек создал свое социальное сосуществование, это его монополия. Следовательно, он несет ответственность за более гармоничное и совершенное развитие событий. Именно поэтому каждый из нас несет свою долю ответственности, хоть и в незначительной или же в ограниченной степени.

Ключевые слова: практическая философия, культурная ценность, совершенствование души (духа), моральное совершенствование.

A.V. BAGHDASARYAN

PRACTICAL PHILOSOPHY OF DAVID THE INVINCIBLE

A human being has created his social coexistence, it’s his own monopoly. So he is responsible for making his own developments more harmonic and perfect. So each of us has his own part of responsibility to realize his role slightly or measurably.

Keywords: practical philosophy, cultural value, soul care, moral improvement.